Արձանագրություն N 3

Երևան քաղաքի Կողբացի փողոցի՝ Թումանյան-Ամիրյան փողոցների միջև ընկած հատվածում երկկողմյա մայթերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԽԾՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

08.09.2020թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Ղալումյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-20/4 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ ծանուցված մասնակիցները չեն ներկայացել ընթացակարգի շրջանակներում անցկացվող գների նվազեցման բանկցություններին և գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվում հայտով ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Ա. Կիրակոսյան)

2.1 Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները.

Ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացվել են հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները:

-«Աստիճան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է միայն «աշխատանքային ռեսուրս» ոչ գնային պայմանը սահմանող չափանիշը,

- Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի և «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները:

2.2 «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը չեն համապատասխանում հրավելով սահմանված պահանջներին, մասնավորապես, կցված յուրաքանչյուր պայմանագրի արժեքը պակաս է ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Հաշվի առնելով, որ «Իրտիգ» ՍՊԸ-ն ներկայացրել է ոչ գնային պայմանները սահմանող չափանիշները, որում առկա է թերություն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացակայող փաստաթղթերը: Բացակայող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում կգնահատվի նաև մասնակցի ոչ գնային պայմանների չափանիշները, հակառակ դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվի զրո՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 10.09.2020 թվականին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ..... Ա. Սարգսյան

..... Ռ. Աբրահամյան

..... Կ. Հարությունյան

..... Ա. Ղալումյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան